

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 777-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետին համապատասխան՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայություններին՝ համաձայն հավելվածի:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություն (այսուհետ՝ գերակայություն)՝ միջոցառումներին նշանակության ընդհանուր ուղղություն, որը գիտության և գիտատար արտադրությունների զարգացման հիման վրա կարող է առավելագույն ներդրումն ունենալ երկրի անվտանգության ապահովման, տնտեսական աճի, գիտատեխնիկական զարգացման, հասարակական առաջընթացի և մրցունակության բարձրացման մեջ:

2. Գերակայությունները պետք է տրոհվեն հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների, իսկ վերջիններս, իրենց հերթին, պետք է բաժանվեն կոնկրետ գիտահետազոտական և (կամ) գիտատեխնիկական թեմատիկաների:

II. 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԻՐՃ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. 2015-2019 թվականների գերակայությունները և դրանց հակիրճ նկարագրություններն են՝

1) **հայագիտություն.**

ա. հայագիտության զարգացումը Հայաստանի Հանրապետության քաղաքականության կարևորագույն ռազմավարական ուղղություններից մեկն է՝ կոչված պահպանելու հայ ժողովրդի ազգային նկարագիրը, խթանելու ազգի հոգևոր-մշակութային զարթոնքը և նպաստելու ազգային ինքնագիտակցության խորացմանն ու ամրապնդմանը: Ներկայումս հայագիտության բնագավառի գիտական հետազոտություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներում, «Մատենադարան» Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում, Երևանի մանկավարժական համալսարանում: Բացի դրանցից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 1638-Ն որոշմամբ

ստեղծվել է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ, որի հիմնական խնդիրներն են հայագիտության հիմնահարցերի ուսումնասիրություններին, ինչպես նաև աշխարհի հայագիտական հաստատությունների համագործակցությունների ընդլայնմանն ու այդ հաստատությունների պահպանմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը: Հայագիտության հետագա զարգացումը պետք է միտված լինի ազգային շահերի միջազգային ճանաչման և պաշտպանության գիտական հենքի ապահովմանը,

բ. գերակայության շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, լեզվաբանությունը, գրականագիտությունը, ցեղասպանագիտությունը, հայ ժողովրդի պատմությունը, ծագումնաբանությունը և պատմամշակութային ժառանգությանը նվիրված ուսումնասիրությունները, կրոնի, այդ թվում՝ հայ առաքելական եկեղեցու պատմությունը, պատմական արխիվների ուսումնասիրման համար համապատասխան կադրերի պատրաստումը, հայագիտության բնագավառում միջազգային համագործակցության զարգացումը և այլն.

2) գիտություններ կյանքի մասին.

ա. կյանքի մասին գիտությունների զարգացումն ունի սկզբունքային նշանակություն կյանքի որակի և չափանիշների բարելավման ուղղությամբ իրականացվող հետազոտությունների և մշակումների մեջ: Կենսաբանության, կենսաֆիզիկայի, կենսաքիմիայի, կենսատեխնոլոգիաների, ինչպես նաև բժշկագիտության վերջին տարիների ձեռքբերումները բնագավառը դարձրել են լայն սպեկտրի միջճյուղային բնագավառ, ինչպես հետազոտությունների բնույթի բազմակողմանիությամբ, այնպես էլ արդյունքների կիրառությամբ գիտության տարբեր բնագավառներում և ամենօրյա կյանքում: Գերակայությունում իր կարևորագույն տեղն ունի մոլեկուլային կենսաբժշկությունը, որը ներմուծում է նոր մոտեցումներ ժամանակակից բժշկության մեջ՝ նպատակ ունենալով բարձրացնել կանխարգելիչ բժշկության, ախտորոշման, թերապիայի, հետևաբար նաև կլինիկական բժշկության որակը և արդյունավետությունը: Գիտական և հասարակական մեծ ուշադրության են արժանանում նոր դեղերի ստացման կամ հիվանդությունների դեմ պայքարելու նոր եղանակների մշակմանն ուղղված հետազոտությունները,

բ. գերակայության շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, մոլեկուլային կենսաբժշկությունը, մոլեկուլային դեղաբանությունը,

թաղանթաբանությունը, կենսաբանական ակտիվ կառույցների սինթեզը, բարձր մաքրության ամինաթթուների հիման վրա արյան արհեստական փոխարինիչ ինֆուզիոն դեղերի արտադրության տեխնոլոգիաները, միջուկային բժշկությունը, ուռուցքաբանությունը, ճառագայթային բժշկությունը, առանձին հիվանդությունների (ժանտախտ, խոլերա, տուլյարեմիա, բրուցելոզ, լեյշմանյոզ և այլն) դեմ կենսատեխնոլոգիական իմունոպրեպարատների ստեղծմանն ու արտադրությանը նվիրված հետազոտությունները և այլն.

3) **արդյունավետ և անվտանգ էներգետիկա.**

ա. էներգետիկայի դերն ու նշանակությունը պայմանավորված է հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման, տնտեսության էներգաարդյունավետության բարձրացման, միջուկային էներգետիկայի զարգացման, վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործման, նոր տեխնոլոգիաների մշակման և հարակից բնագավառների զարգացման անհրաժեշտությամբ: Այդ խնդիրները Հայաստանի համար ունեն ռազմավարական նշանակություն, քանի որ մեր երկրում բացակայում են արդյունաբերական նշանակություն ունեցող սեփական հանածո վառելիքաէներգետիկ պաշարներ: Հետևաբար, հանրապետության ներկա և ապագա զարգացումների համար էներգետիկ ապահովվածության բավարարման ոլորտի գերխնդիրը սեփական աղբյուրների զարգացմամբ էներգետիկ անկախության հնարավոր բարձր աստիճանի ապահովումն է, որը ենթադրում է տնտեսության էներգաարդյունավետության նշանակալի բարձրացում և վերականգնվող էներգաաղբյուրների լայնամասշտաբ կիրառում: Այդ նպատակին ուղղված մոտակա տարիների գործողությունները ներառված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցում,

բ. գերակայության շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, միջուկային ֆիզիկան, միջուկային էներգետիկան, միջուկային անվտանգությունը, էներգիայի սպառման արդյունավետության և էներգախնայողության մակարդակի բարձրացմանն ուղղված ուսումնասիրությունները, վերականգնվող էներգաաղբյուրների օգտագործման տեխնոլոգիաները, արևային էներգիայի արդյունավետ

օգտագործմանը նվիրված հետազոտությունները, երկրաչերմային էլեկտրակայանի կառուցման հնարավորությունների ուսումնասիրությունը և այլն.

4) հիմնական արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ.

ա. հիմնական արդյունավետ տեխնոլոգիաները, այդ թվում՝ նանոտեխնոլոգիաները, նոր նյութերը, ֆոտոնիկան և կենսատեխնոլոգիաներն արդի ժամանակների առավել դինամիկ զարգացող միջճյուղային բնագավառներն են: Դրանք վճռորոշ դերակատարություն ունեն ինչպես երկրի արդյունաբերության տարբեր ոլորտներին վերաբերող հետազոտությունների և մշակումների ու ինովացիոն զարգացման ռազմավարությունների մեջ, այնպես էլ, ընդհանրապես տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման մեջ: Մասնավորապես, նշված տեխնոլոգիաներով է առավելապես պայմանավորված գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծումն ու զարգացումը,

բ. հիմնական արդյունավետ տեխնոլոգիաների շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, միկրո- և նանո- էլենտրոնիկան, նանոօպտիկան, նանոքիմիան, լազերային տեխնոլոգիաները, բարձր արդյունավետությամբ աշխատող նոր լազերների և լազերային տարրերի մշակման տեխնոլոգիաները, քվանտային օպտիկան, բյուրեղների աճեցման նոր տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիաները, այդ թվում՝ հիմնականում լքված հանքավայրերից ու թափոններից պղնձի և այլ ծանր ու հազվագյուտ մետաղների ստացման արդյունավետ եղանակների, ոսկու կորզման մանրէաբանական տարավլացման մեթոդների ու տեխնոլոգիաների մշակումը և այլն,

գ. միևնույն ժամանակ, տնտեսության, արտադրության, հասարակության զարգացման, ինչպես նաև անձի կյանքում հարմարավետության մակարդակի բարձրանցման վրա իր ազդեցության մասշտաբներով առանձնանում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները: Ոլորտն իրենից ներկայացնում է տեղեկատվություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական ենթահամակարգերի ամբողջություն, ինչպես նաև այդ գործընթացներում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգ: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով պայմանավորված գործառույթներն ակտիվորեն ազդում են երկրի անվտանգության մակարդակի բարձրացման, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: Հայաստանի Հանրապետության

ազգային անվտանգությունն էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության մակարդակից, և այդ կախվածությունը մեծանում է գիտատեխնիկական առաջընթացին համընթաց,

դ. տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, առաջատար էլեկտրոնային ենթակառուցվածքների և ծառայությունների զարգացմանը նվիրված ուսումնասիրությունները և լուծումների մշակումը, մեծ տվյալների պահպանումը, մշակումը և վերլուծությունը, բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիաների մշակումը, «ամպային» տեխնոլոգիաների հետազոտումը և ներդրումը, գերհամակարգիչների լայնամասշտաբ օգտագործման տեխնոլոգիաները, գիտական, գիտատեխնիկական, տնտեսական և հասարակական մարտահրավերների լուծմանն ուղղված թվային մոդելավորման մեթոդների մշակումը և այլն.

5) տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում.

ա. տիեզերքի կառուցվածքին և զարգացման օրինաչափություններին նվիրված հետազոտությունները Հայաստանի Հանրապետությունում ունեն ձևավորված և կայացած ավանդույթներ: Մեծ է հայ գիտնականների ներդրումը, մասնավորապես, ակտիվ գալակտիկաների, երիտասարդ աստղերի և դրանց հետ կապված անկայուն երևույթներին, տիեզերական ճառագայթների ֆիզիկային նվիրված ուսումնասիրություններում: Վերջին տասնամյակում բուռն վերելք է ապրում բարձր էներգիաների աստղաֆիզիկան, որի հետազոտությունների առարկան աստղաֆիզիկական աղբյուրներում տեղի ունեցող ոչ ջերմային երևույթների ուսումնասիրությունն է: Նշված հետազոտությունները խթանել են նաև բնագավառի գիտական, այդ թվում՝ աստղագիտական, օպտիկական և էլեկտրոնային սարքաշինության զարգացմանը,

բ. տիեզերքի ուսումնասիրություն բնագավառի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, ակտիվ միջուկներով և ակտիվության այլ ձևերով օժտված գալակտիկաների, աստղառաջացման տիրույթների ուսումնասիրությունները, տիեզերական ճառագայթների և բարձր էներգիաների աստղաֆիզիկան, աստղաֆիզիկական սարքաշինությունը և այլն,

գ. երկրի մասին գիտությունները կարևորվում են հասարակության և տնտեսության զարգացման վրա ունեցող իրենց ազդեցության նշանակությամբ՝ սկսած գիտական հայտնագործություններից մինչև բնական ռեսուրսների և աղետների կառավարում: Մեր մոլորակի, մեր շրջակա միջավայրի ու կյանքի էվոլյուցիան փոխկապակցված երևույթներ են և, որպես հետևանք, երկրի մասին գիտությունների շրջանակներում իրականացվող հետազոտություններն իրենց բնույթով դարձել են միջճյուղային՝ դիտողական նոր տեխնոլոգիաների, գիտական նոր ենթակառուցվածքների, տվյալների հավաքագրման, պահպանման և վերլուծության նոր մեթոդաբանությունների, գիտության տարբեր ճյուղերի/բնագավառների, ինչպես նաև երկրների համագործակցություններով,

դ. երկրի մասին գիտությունների շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, օգտակար հանածոների շահագործման, լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետ եղանակների մշակումը, երկրաբանությունը, երկրաբանական վտանգավոր երևույթների (երկրաշարժեր, սողանքներ, սելավներ, հրաբուխներ և այլն) կանխատեսման և դրանց դեմ պայքարի միջոցառումների մշակմանը նվիրված ուսումնասիրությունները, երկրի մթնոլորտում տեղի ունեցող ֆիզիկական երևույթների հետազոտումը և այլն,

ե. արդի ժամանակներում բնապահպանական խնդիրներն ու բնապահպանական անվտանգությունը դարձել են ցանկացած երկրի տնտեսական զարգացման կարևորագույն գործոններ: Մեր երկրի պարագայում բնական ռեսուրսների և հանածոների սակավության պայմաններում, բնական պաշարների պահպանման և մաքուր տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման հիմնահարցերը խնայողական բնօգտագործման հետ կապված խնդիրները դարձնում են առավել կարևոր: Խնայողական բնօգտագործման և ընդհանրապես բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների գրագետ օգտագործումը,

զ. խնայողական բնօգտագործման շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, բնական միջավայրի գիտական մոնիթորինգը, բնական պաշարների խնայողական օգտագործման և պահպանման տեխնոլոգիաների մշակմանն ուղղված ուսումնասիրությունները, կենսաբազմազանության պահպանումը,

բնապահպանական տեսակետից անվտանգ տեխնոլոգիաների մշակումը, բնության պահպանության տեխնոլոգիաների ստեղծմանը նվիրված ուսումնասիրությունները և այլն.

6) գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար հետազոտություններ.

ա. հիմնարար գիտությունը հասարակության զարգացման կարևորագույն ռազմավարական բաղկացուցիչներից է: Գիտական առաջընթացը, բարձր տեխնոլոգիաների ստեղծումն ու օգտագործումը, երկրի ինովացիոն զարգացումը և առհասարակ հասարակության քաղաքակրթական մակարդակն անքակտելիորեն կապված և պայմանավորված են հիմնարար գիտության առաջընթացի հետ: Հիմնարար գիտությունն ապահովում է կրթության ողջ գործընթացը, հիմք է հանդիսանում կիրառական գիտության զարգացման համար ու ապահովում է այն գիտական միջավայրը, որն ի զորու է իրականացնելու նոր տեխնոլոգիաների «տեղափոխումը» կիրառական հետազոտությունների հարթություն: Բացի այդ, հիմնարար գիտությունն ունի նաև հասարակության ընդհանուր մշակութային մակարդակը բարձրացնելու առաքելություն: Վերոնշյալով է թելադրված հիմնարար գիտության ընդգրկումն ազգային գերակայությունների շարքում,

բ. հիմնարար գիտական հետազոտությունները Հայաստանի Հանրապետությունում ունեն ձևավորված ավանդույթներ և կայացած ու միջազգային մակարդակին համապատասխանող գիտական դպրոցներ: Մասնավորապես, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության հայկական դպրոցներն արդարացիորեն համընդհանուր ճանաչում են ստացել աշխարհում, և պետք է արձանագրել՝ մինչև այսօր պահպանում են իրենց բարձր վարկանիշը,

գ. դրա հետ միասին, առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել հումանիտար և հասարակական գիտությունների զարգացմանը, որպես պետության շարունակականության, ինչպես նաև ազգային ավանդույթների ու մշակութային ժառանգության պահպանման կարևորագույն տարրեր: Միևնույն ժամանակ, հումանիտար և հասարակական գիտություններն անփոխարինելի ռեսուրս են հասարակական զարգացումներին նպաստող ռեֆորմների իրականացման համար: Այդ դերն ավելի է կարևորվում արդի ժամանակներում, երբ անհրաժեշտ է բնագավառի վերջին նվաճումներն օգտագործել աշխարհաքաղաքական նոր, այն է՝ տարածաշրջանային և համաշխարհային ինտեգրացման պայմաններում պետական նոր քաղաքականության ձևավորման գիտական հենքի ստեղծման համար,

դ. անհրաժեշտ է ուժեղացնել փոխադարձ կապերը հիմնարար, կիրառական հետազոտությունների և ինովացիոն գործընթացների միջև, ապահովել արդյունավետ քայլեր սոցիալ-տնտեսական զրգացման համար: կարևորագույն խնդիրներից է տաղանդավոր երիտասարդների նոր սերունդների պատրաստամանը նպաստող ռազմավարական մոտեցումների շարունակական իրագործումը:

III. ԱՄՓՈՓՈՒՄ

4. Գերակայություններում, հիմնական ուղղությունների/տեխնոլոգիաների և կոնկրետ գիտահետազոտական/գիտատեխնիկական թեմատիկաների շրջանակներում կատարվող հետազոտություններն ու մշակումները պետք է ունենան պետական ֆինանսավորման առաջնահերթություն: Բոլոր գերակայությունների շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների թեմատիկաների ընտրության և ֆինանսավորման ժամանակ առաջնահերթությունը պետք է տրվի ազգային և տարածաշրջանային անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված հիմնական ուղղություններին/տեխնոլոգիաներին և կոնկրետ գիտահետազոտական թեմատիկաներին:

5. Միևնույն ժամանակ, գերակայություններում, հիմնական ուղղություններում կամ տեխնոլոգիաներում չընդգրկված գիտահետազոտական և (կամ) գիտատեխնիկական թեմատիկաները նույնպես պետք է ստանան պետական աջակցություն՝ գիտական ենթակառուցվածքները պետք է հավասարապես մատչելի լինեն ինչպես բոլոր ծրագրերի ու թեմաների կատարման, այնպես էլ բոլոր հետազոտողների համար:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1.	<p>Անհրաժեշտությունը</p> <p>Սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 777-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 57-րդ կետից և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2010-2014 թվականների գերակայությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1302-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 640-Ն որոշումից:</p>
2.	<p>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</p> <p>ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման ներկայումս գործող գերակայությունները սահմանվել են ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 640-Ն որոշմամբ և հետևյալներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ, 2) գիտություններ կյանքի մասին, 3) վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ, 4) առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, 5) տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում, 6) կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ: <p>Պետական բյուջեի ֆինանսավորմամբ, 2010-2014 թվականների գերակայությունների շրջանակներում, իրականացվում են հետազոտություններ և մշակումներ 62 գիտական կազմակերպություններում և 12 բարձրագույն ուսումնական հաստատություններում (2012 թվականի տվյալներով): Այդ աշխատանքների մեջ ներգրավված են 5598 աշխատողներ, որոնցից 4421-ը գիտաշխատողներ (2012 թվականի տվյալներով): Բացի դրանցից, իրականացվում է նաև գիտական կադրերի պատրաստման՝ ասպիրանտական ուսուցման ծրագիրը: Մասնավորապես, 2012 թվականի դրությամբ ասպիրանտների ընդհանուր թիվը հանրապետությունում կազմել է 1104, որոնցից 582-ը ներկայացնում է «Հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ», 104-ը՝ «Գիտություններ կյանքի մասին», 244-ը՝ «Վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ», 236-ը՝ «Առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ», 22-ը՝ «Տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում» և 168-ը՝ «Կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ» բնագավառը (մեկից ավելի բնագավառի դեպքում դասակարգվել է որպես յուրաքանչյուրում մեկական ասպիրանտ):</p> <p>Իրականացվում են գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների արդիականացման, մասնավորապես, գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ամենամյա մրցույթներ: «Գիտություններ կյանքի մասին» «Առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ»</p>

բնագավառներում իրականացվում են երկու՝ «Երևանի ցիկլոտրոն» և «Քենդլ» մեգանախագծեր:

2010-2014 թվականների գերակայությունների շրջանակներում 2010-2012 թվականների ընթացքում հրատարակվել են 29395 գիտական աշխատություն, ազգային հայտատուներին տրվել է 262 գյուտերի, օգտակար մոդելների արդյունաբերական նմուշների արտոնագրեր (այսուհետ՝ արտոնագիր): Գիտական աշխատություններից 3636-ը ներառված են «Թոմսոն Ռոյթերս» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում, իսկ արտոնագրերից 5-ը՝ տրվել են Եվրոպական արտոնագրային գրասենյակի կողմից:

Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային վարկանիշավորման համար հիմք են հանդիսանում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված գիտական աշխատությունները կամ արտոնագրերը: Հետևաբար, ավելի մանրամասն ներկայացնենք 2010-2014 թվականների գերակայությունների շրջանակներում 2010-2013 թվականների ընթացքում Հայաստանի գիտաաշխատողների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հրատարակված և «ՍԿՈՊՈՒՍ» (SCOPUS) գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական աշխատությունների վերաբերյալ տեղեկատվությունը (տե՛ս, «SCImago. (2007). SJR — SCImago Journal & Country Rank. Retrieved October 11, 2014, from <http://www.scimagojr.com>» և Աղյուսակ 1):

2010-2014 թվականների գերակայություն	Փաստաթղթերի քանակ				
	2010	2011	2012	2013	2010-2013
Հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ	44	46	47	36	173
Գիտություններ կյանքի մասին	151	186	200	185	722
Վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ*	21	27	28	20	96
Առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ	225	430	313	245	1213
Տիեզերքի ուսումնասիրություն**, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում	47	59	71	47	224
Կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ	696	843	970	822	3331
Ընդամենը	1184	1591	1629	1355	5759

*) Այս գերակայությունում ընդգրկված են էներգիա և Քիմիական տեխնոլոգիաներ բնագավառների հրապարակումները:

**) Այս գերակայությունում չեն ընդգրկված Աստղագիտության բնագավառի հրապարակումները, որոնք դասակարգված լինելով մեկ ընդհանուր՝ Ֆիզիկա և Աստղագիտություն բնագավառում, ընդգրկվել են Կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ գերակայության մեջ:

Աղյուսակ 1: 2010-2014 թվականների գերակայությունների շրջանակներում 2010-2013 թվականների հրապարակումների քանակն ըստ «ՍԿՈՊՈՒՍ» շտեմարանի տվյալների (տվյալները վերցվել են 2014 թվականի հոկտեմբերի 11-ին):

	<p>Աղյուսակ 1-ից հետևում է, որ 2014 թվականի հոկտեմբերի 11-ի դրությամբ «ՍԿՈՊՈՒՍ» շտեմարանում ընդգրկված գիտական աշխատանքների մեջ ամենաշատ հրապարակում եղել է «Կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ» բնագավառում՝ ընդհանուրի շուրջ 58 տոկոսը, իսկ ամենաքիչը՝ «Վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ» բնագավառում՝ ընդհանուրի շուրջ 2 տոկոսը: «Հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ» բնագավորի հրապարակումները կազմում են ընդհանուրի 3 տոկոսը, ինչը կարևոր առաջընթաց է նախորդ տարիների համեմատ:</p> <p>Միջազգային համագործակցությունն իրականացվում է և՛ երկկողմ հետազոտական ծրագրերի, և՛ լայնամասշտաբ գիտական համագործակցությունների շրջանակներում: 2010-2013 թվականների ընթացքում միջազգային գիտական համագործակցության շրջանակներում հրատարակվել և 2014 թվականի հոկտեմբերի 11-ի դրությամբ «ՍԿՈՊՈՒՍ» շտեմարանում ընդգրկված է 2113 գիտական աշխատանք, ինչը կազմում է ընդհանուրի շուրջ 55 տոկոսը:</p> <p>ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման ներկայումս գործող գերակայությունների վերասահմանումը պայմանավորված է նրանով, որ նախ անհրաժեշտ է դրանք համապատասխանեցնել հանրապետությունում իրականացվող հետազոտություններին, առկա գիտական ներուժին, ինչպես նաև միջազգային փորձին՝ առաջին հերթին, գիտության և ինովացիայի բնագավառում Եվրամիության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի գերակայությունները:</p>
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	<p>Գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունները վերասահմանելիս օգտագործվել են՝</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված սկզբունքները և չափանիշները, - ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ռազմավարությունները և հայեցակարգերը, - ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2010-2013 թվականների արդյունքները, այդ թվում՝ միջազգային առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված հրապարակումները, հանրապետությունում առկա գիտական ներուժի և ենթակառուցվածքների գնահատականը, պետական գիտական ծրագրերի և թեմաների արդյունքները, - միջազգային փորձը՝ առաջին հերթին գիտության և ինովացիայի բնագավառում Եվրամիության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի գերակայությունները:
4.	Կարգավորման նպատակը և բնույթը
	<p>Գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունների սահմանում, հանրապետության տնտեսության պահանջներից բխող և (կամ) միջազգայնորեն արդիական համարվող գիտահետազոտական աշխատանքների պետական ֆինանսավորման առաջնահերթության ապահովում:</p>
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, ՀՀ կրթության և գիտության նախարարության</p>

	<p>գիտության պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 25-Ա/Ք հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խումբ, գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:</p>
6.	Ակնկալվող արդյունքը
	<p>2015-2019 թվականներին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերի և թեմաների համապատասխանեցում հանրապետության գիտական ներուժի առկա հնարավորություններին և ունեցած ձեռքբերումներին, ինչպես նաև գիտության և տեխնիկայի զարգացման համաշխարհային միտումներին: Հասցեական, այդ թվում՝ նաև հանրապետության տնտեսության պահանջներից բխող, հետազոտությունների և մշակումների իրականացում, արդյունքում՝ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում:</p>

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 2014-10-23 N ԱԱ/ՀՄ-2-3/8529-14</p>	<p>1. Նախագիծը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: 2. Նախագիծը համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին: 3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն: 4. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են: 5. Նախագիծն իր մեջ ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում: 6. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 777-Ն որոշմամբ հաստատված 1-ին</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

	<p>հավելվածի 57-րդ կետին՝ համաձայն «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջների:</p> <p>Միաժամանակ՝ անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 640-Ն որոշումը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:</p> <p>7. Նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների հետ:</p> <p>8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 6-րդ և 7-րդ կետերին:</p>	<p>Չի ընդունվել: Նշված որոշումը վերաբերում է 2010-2014թթ. և չի հակասում սույն որոշմանը :</p> <p>Ընդունվել է:</p>	<p>Մնացել է անփոփոխ:</p> <p>Նախագիծը համաձայնեցված է ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների հետ:</p>
<p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա 2014-10-22 N 24-01/371</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		
<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2014-10-23 N ԱԱ/ՀՄ-2-3/8529-14</p>	<p>Նախագիծը՝</p> <p>ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն.</p> <p>բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն:</p> <p>ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:</p>		
<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն 2014-10-24 N ՍԿ/ԳԴ-3/5778-14</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		

<p>ՀՀ բնապահպանության նախարարություն 2014-10-24 N 1/04.3/12304-14</p>	<p>1. ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ որոշում) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա: Ավելին որոշման նախագծի ընդունման դեպքում այն կունենա դրական հետևանքներ:</p> <p>2. Որոշման նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:</p> <p>3. Որոշման նախագիծը բնապահպանության ոլորտին առնչվում է, սակայն այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:</p> <p>Որոշման կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:</p> <p>ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		
<p>ՀՀ էներգետիկային և բնական պաշարների նախարարություն 2014-10-24 N 02/22.2/4676-14</p>	<p>ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		
<p>ՀՀ առողջապահության նախարարություն 2014-10-27 N ԱՄ/11.1/11217-14</p>	<p>ՀՀ կառավարության որոշման ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:</p> <p>1. Առաջարկվում է Նախագծի Հավելվածի 4-</p>		

	<p>րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված «դեղամիջոցների» բառը փոխարինել «դեղերի» բառով, ինչը բխում է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից:</p> <p>2. Նախագծի Հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության «վտանգավոր համաճարակային» բառերը փոխարինել «առանձին» բառով, նկատի ունենալով, որ որևէ ակտով սահմանված չեն վտանգավոր համաճարակային հիվանդությունները:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ մշակույթի նախարարություն 2014-10-28 N 01/3.1/5283-14</p>	<p>ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		
<p>ՀՀ պաշտպանության նախարարություն 2014-10-31 N ՊՆ/510-1912</p>	<p>ՀՀ կառավարության որոշման նախագծի հավելվածում գերակայությունների հակիրճ նկարագրության «հայագիտություն» բաժնում առաջարկում ենք քննարկել Աստվածաբանության և Հայ Առաքելական եկեղեցու պատմության ներառման նպատակահարմարության հարցը:</p>	<p>Ընդունվել է մասամբ:</p>	<p>Նախագծի հավելվածի «հայագիտություն» բաժնում ավելացվել են «կրոնի, այդ թվում՝ հայ առաքելական եկեղեցու պատմությունը» բառերը:</p>
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2014-11-10 N 01/83-2/19691-14</p>	<p>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:</p> <p>ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ, իր իրավասությունների սահմաններում, դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		
<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն 2014-11-13 N 01/10.2.1/7064-14</p>	<p>Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի</p>		

	<ul style="list-style-type: none"> • Նախագծի հավելվածում «տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ» բառերն առաջարկում ենք փոխարինել «տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ» բառերով: • Հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի գ. և դ. պարբերություններն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. գ. տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաները տնտեսության մեջ արտադրողականության, հասարակության և անձի կյանքում հարմարավետության, բոլոր մակարդակներում կառավարման արդյունավետության բարձրացման հիմնական կրողներն են: Ոլորտն իր մեջ ներառում է համակարգչային հիմքի վրա, մասնավորապես, ծրագրային ապահովման, սպասարկման կամ կառավարման տեղեկատվական համակարգերը, ինչպես նաև բոլոր ձևաչափերով տեղեկատվություն՝ ներառյալ տվյալներ, պատկերներ (շարժական, անշարժ) ստեղծելու, փոխակերպելու, պահպանելու, պաշտպանելու, մշակելու, էլեկտրոնային միջոցներով փոխանցելու և անվտանգ հայթայթելու համար օգտագործվող տեխնոլոգիաների բոլոր տեսակները: 	<p>Ընդունվել է մասամբ:</p> <p>Ընդունվել է մասամբ:</p>	<p>Հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի գ. պարբերությունում «հասարակության զարգացման» բառերից հետո ավելացվել են «ինչպես նաև անձի կյանքում հարմարավետության մակարդակի բարձրացման» բառերը:</p> <p>Հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի դ. պարբերությունում «ծառայությունների զարգացմանը նվիրված ուսումնասիրությունները» բառերից հետո ավելացվել են «և լուծումների մշակումը» բառերը, «մշակումը» բառից հետո՝ «վերլուծությունը» բառը, «հաշվողական տեխնոլոգիաների մշակումը,» բառերից հետո՝ ««ամպային» տեխնոլոգիաների հետազոտումը և ներդրումը» բառերը:</p>
--	---	---	--

	<p>դ. առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների այնպիսի հիմնական ուղղությունների զարգացմանը, ինչպիսիք են, մասնավորապես, առաջատար էլեկտրոնային ենթակառուցվածքների և ծառայությունների զարգացմանը նվիրված ուսումնասիրությունները և լուծումների մշակումը, մեծ տվյալների պահպանումը, մշակումը և վերլուծությունը, բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիաների մշակումը, «ամպային» տեխնոլոգիաների հետազոտումը և ներդրումը, նոր ալգորիթմների մշակումը, միկրոսխեմաների նախագծումը, գերհամակարգիչների լայնամասշտաբ օգտագործման տեխնոլոգիաները, գիտական, գիտատեխնիկական, տնտեսական և հասարակական մարտահրավերների լուծմանն ուղղված թվային մոդելավորման մեթոդների մշակումը և այլն:</p> <p>Միևնույն ժամանակ, ուշադրություն պետք է դարձվի ճարտարագիտության ոլորտի զարգացմանը և տեղական ու միջազգային շուկաներում բարդ ճարտարագիտական լուծումների առաջադրմանը:</p>		
--	--	--	--